ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՎԱՐ

(առարկա)

Թեմա՝ «ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ»

Կազմեց՝ Կարոլինա Մկրտչյան

(անուն, ազգանուն, հայրանուն)

«Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Գայանե Ավագյան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3

Գլուխ.1 ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.1 Ուսուցիչ-ծնող համագործակցության դերը սովորողների առաջադիմության բարձրացման վրա.....5

1.2 Ծնողական ժողովների անցկացման կարևորությունը.....9

1.3 Փորձարարական մաս..... 15

Եզրակացություններ..... 21

Օգտագործված գրականության ցանկ.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի գործունեությունն ուղղված է անձնավորության ձևավորմանը և զարգացմանը, ինչն իրականացվում է ուսումնական գործընթացի ընթացքում: Ուսուցչի գերխնդիրն ու առաքելությունը մարդկային էության բացահայտումն է, հոգու կառուցումը: Հասարակության կողմից կրթական համակարգին ներկայացվող պետական պատվերը՝ ֆիզիկապես և հոգեբանորեն առողջ սերնդի ձևավորումն է, որի իրականացնողը հենց ուսուցիչն է:

Այս առումով անգնահատելի է ուսումնական գործընթացում սովորողի հետ տարվող ճիշտ ու համակողմանի աշխատանքը, որն անկյունաքարային է ու կարևոր անձի հետագա կենսագործունեության համար: Մի չնչին բացթողումը, մեթոդի կամ հնարի սխալ ընտրությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ սովորողի հոգեկերտվածքի, ընկալումների, առհասարակ բնականոն զարգացման վրա, ուստի այս պարագայում շատ է կարևորվում ծնող-ուսուցիչ կապը: Առողջ համագործակցության արդյունքում, անշուշտ, հնարավոր է անցնցում անցնել ուսումնական բոլոր մակարդակները ու բազում հմտություններով, նոր գիտելիքներով մտնել կյանքի հաջորդ շրջափուլ:

Մեծ է ուսուցչի՝ որպես կրթողի դաստիարակողի, ուղղորդողի, խրախուսողի դերը սովորողի առաջադիմության, մոտիվացիայի, աշխատունակության բարձրացման հարցում, սակայն ուսուցիչն ավելի վստահ ու գործուն է առաջ շարժվում, երբ սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի հետ ունի ընդհանուր նպատակ: Այս առումով առանցքային է երկու սուբյեկտների առողջ համագործակցումը, խնդիրների միասնական վերհանումը, դրանց լուծումները փնտրելու ճանապարհին փոխգործակցությունը: Ստացվում է, որ երկու կողմերը այս գործընթացում փոխլրացնում են միմյանց՝ նպատակ ունենալով անցնցում ապահովել սովորողների՝ կրթություն ստանալու իրավունքը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականությունության համար հենքն է հանդիսանում սովորողի կրթության ու դաստիարակության իրավունքը և այդ իրավունքի իրացման ճանապարհին ծնող-ուսուցիչ առողջ համագործակցային հարաբերությունների հաստատումն այն

համատեքստում, որ երկու կողմն էլ շահագրգիռ են, որ այդ իրավունքի իրացման գործընթացը լինի արգասաբեր, հաջողություններով ու հաղթանակներով լի:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել ծնող-ուսուցիչ կապի դրական ազդեցությունը սովորողների դաստիարակության, ուսումնառության, ընդհանուր զարգացման ու աշխարհաճանաչողության վրա:

Հետազոտության խնդիրը: Սահմանել այն եղանակներն ու ձևերը, որոնց շրջանակներում թույլատրելի է և անհրաժեշտ, որպեսզի ծնողն ու ուսուցիչը, միմյանց փոխօգնելով ու փոխլրացնելով, նպաստեն, որ ուսումնական գործընթացում սովորողն ունենա գիտակցված մոտեցումներ, առաջադիմի, ունենա կրթական չափորոշիչների վերջնարդյունքներին համապատասխան գիտելիք, հմտություններ ու կարողություններ:

ԳԼՈՒԽ 1 ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.1 Ուսուցիչ-ծնող համագործակցության դերը սովորողների առաջադիմության բարձրացման վրա

Յուրաքանչյուր ընտանիք ունի անհատական մոտեցում երեխայի կրթությանն ու դաստիարակության հարցում: Ընդհանուր հասարակության մեջ, սակայն, կան կոնկրետ մոտեցումներ. գնահատվում ու խրախուսվում է բարձր մարդկային արժեքներով, կիրթ ու կրթված անձնավորությունը: Մարդկային այս որակներն, անշուշտ, ապահովվում են առաջին հերթին ընտանիքում, ապա գործընթացը շարունակվում է հանրակրթական ուսումնական հաստատությունում: Այս առումով դպրոցն ունի մեկ տեսակետ, որը փոփոխման ենթակա չէ և ամրագրված է ՀՀ հանրակրթության մասին օրենքում՝ «Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է[1]»: Կարող ենք վստահաբար պնդել, որ անկախ բոլոր հանգամանքներից, երեխան պետք է ստանա որակյալ ու բազմակողմանի կրթություն:

Ինչպես գիտենք, ուսումնական գործընթացի մասնակից են հավարվում սովորողը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը և ուսուցիչը: Վերջիններիս իրավունքներն ու պարտավորությունները սահմանված են օրենքով: Ուսուցչը ուսումնական գործընթացի հիմնական կազպակերպիչն ու իրականացնողն է, ով մեծագույն պատասխանատվություն է կրում սովորողի չափորոշչային վերջնարդյունքներին հասնելու համար: Սակայն այս տեսակետից շատ կարևոր է նաև սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի պատասխանատու վերաբերմունքը կրթական գործընթացին, վերջինիս կողմից ուսուցչի հետ

[1] www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք, հոդված 4, կետ 2:

համագործակցելու, սովորողին վերահսկելու ու առաջնորդելու գործառույթը: Սովորողի կրթական կարիքների հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության հիմքում պետք է դրված լինեն ընդհանուր հետաքրքրություններն ու նպատակները: Այդ փոխհարաբերությունների հիմքում պետք է դրվեն միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքները:

Նման միջավայրի ապահովումը կարող է խթանել ուսուցիչի աշխատանքի արդյունավետությունը, քանի որ ծնողների հետ համատեղ ջանքերով կարելի է հասնել սովորողի՝ ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողունակությունների անցնցում ձևավորմանը: Սովորողին, ծնողներին և ուսուցիչներին պետք է միավորեն ընդհանուր մտահոգություններ, խնդիրներ, նպատակներ ու դրանց հասնելու լուծումներ, եղանակներ: «Սովորողի ծնողն իրավունք ունի համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով[2]»: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկարատև ու բարդ գործընթաց է, որի հիմքում պետք է դրված լինեն մի շարք սկզբունքներ, որոնց թվում են.

- Փոխադարձ հարգանքը ծնող-ուսուցիչ հարաբերություններում;
- Առողջ բարոյահոգեբանական միջավայրը;
- Ընդհանուր շահի շուրջ բանակցելու, ելքեր գտնելու կարողությունը;
- Արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմների գործարկումը;
- Մշտադիտարկումը;
- Սխալների ընդունումը, վերլուծություն, թերի կողմերի արձանագրումը;
- Ինքնանդրադարձ կատարելու կարողությունը;
- Հումանիստական մղումները;
- Սեփական շահի ստորադասումը;
- Անձնային բարձր որակների դրսևորումը:

[2] www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք, հոդված 28, կետ 2:

Ծնողները և ուսուցիչները պատասխանատվություն են կրում միևնույն սովորողի կրթության ու դաստիարակության համար, հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի, երբ վերջիններս մշտապես կապ պահեն միմյանց հետ, ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, ինչպես նաև փորձեն համատեղ ուժերով մշակել դաստիարակչական մեխանիզմներն ու դրանց լուծման ուղիները: Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորող հանգամանքներից է ծնողների իմացական կարողությունները , հայացքներն ու դիրքորոշումները: Շատ կարևոր է նաև ծնողի կողմից ազնիվ ու անվերապահ մոտեցումն ուսուցչին, դպրոցին: Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում[3]: Ուսումնական գործընթացին ծնողների ներգրավվածությունը մեծապես կարող է պայմանավորել սովորողների հաջողությունը: Ուստի և ցանկացած ծնող պետք է իմանա նաև օրենքով սահմանված իր պարտավորությունները: Սովորողի ծնողը պարտավոր է՝

1) երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար.

2) մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական առողջության և հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար.

3) հարգել երեխայի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական և մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների և սովորույթների նկատմամբ.

[3] http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf Ծնողների ներգրավվածությունը, Թբիլիսի, 2015, էջ 3:

4) դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության և շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակույթների նկատմամբ.

5) դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժական աշխատողների նկատմամբ.

6) սույն օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով սահմանված ժամկետներում երեխային բերել ուսումնական հաստատություն.

7) հատուցել իր, ինչպես նաև իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը.

8) սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ, ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված այլ նյութեր օգտագործելուց[4]:

Անկախ ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակից, ծնողի կրթության աստիճանից՝ վերջինիս ներգրավվածությունը սովորողի կրթության գործընթացին անփոխարինելի կարելի է համարել սովորողի զարգացման վրա թողած ազդեցության առումով: Այն սովորողները, ում ծնողներն ավելի բաց են համագործակցության համար, հաճախակի են հետաքրքրվում իրենց երեխաների վարքով ու առաջադիմությամբ, ավելի են մոտիվացվում: Արդյունքում, նրանք դառնում են ավելի պատասխանատու, բարձրանում է աշխատունակության մակարդակը և ունենում են հաջողություններ: Անշուշտ, ծնողների ներգրավվածությունը դպրոցի, դասարանի սովորողի դպրոցական կյանքին դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը նպաստում է վերջիններիս հետ բարեկամական հարաբերությունների հաստատմանը՝ ստեղծելով բարոյահոգեբանական կայուն միջավայր:

Այսուհանդերձ, այս համագործակցության շրջանակներում հնարավոր են նաև կոնֆլիկտներ, անհամաձայնություններ, որոնք կարող են վնաս բերել բուն ուսումնական գործընթացին, մտցնել լարվածություն: Ուստի շատ կարևոր է երկուստեք պահպանել բարեվարքության կանոնները, լսել խնդիրն ու բերել

[4] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 ՀՀ Հանրակրթության մասին օրենք, հոդված 28:

հիմնավոր փաստարկներ, չառաջնորդվել բացառապես սեփական շահով: Այսպիսով, վստահաբար կարող ենք ասել, որ կրթության համակարգում ավելի լավ արդյունքների հասնելու, սովորողների կրթության ու դաստիարակության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ:

1.2 Ծնողական ժողովների անցկացման կարևորությունը

Ծնողների հետ մշտական կապի մեջ լինելու, հնարավոր խնդիրները, դասարանում առկա կազմակերպչական հարցերը քննարկելու համար դասարանի ղեկավարը սահմանված կարգի համաձայն պետք է անցկացնի ծնողների հետ ընդհանրական հանդիպումներ՝ ծնողական ժողովներ: Սա այն հարթակն է, որտեղ թե' ուսուցիչը, թե սովորողի ծնողը՝ հայրը, մայրը, օրինական ներկայացուցիչը, ունեն հնարավորություն ուղիղ հաղորդակցման: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, քննարկվում են սովորողների հնարավոր վարքային, կրթական և այլ բնույթի հարցերը: Ժողովի ժամանակ էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճն ու նպատակը: Ժաղովի ընթացքն արձանագրվում է, ըստ անհրաժեշտության՝ կարելի է կազմակերպել արտահերթ ծնողական ժողովներ:

Ուսուցիչը նախ և առաջ ծնողի համար ներկայացնում է առկա խնդիրը կամ իրավիճակը, խոսում դրա հնարավոր դրական ու բացասական ենթատեքստի ու զարգացման հնարավոր սցենարների, հետևանքների մասին: Այստեղ կարևոր է ծնողական համայնքի արձագանքը՝ հետադարձ կապ ստեղծելու կարողությունը: Շատ կարևոր է, որ ծնողն ընդունի և' դրական և' բացասական կամ քննադատողական դիտարկումները: Շատ հաճախ՝ վերջին դիտարկումների պարագայում, ծնողները ցուցաբերում են անհավասարակշիռ ու պաշտպանողական վարքագիծ: Մինչդեռ, շատ կարևոր է արձանագրել խնդիրը, դնել այն քննարկման, որպեսզի դրան հետևի լուծումներ գտնելու հնարավոր հիմնախնդիրներն ու բացթողումները շտկելու փուլը: Կարևոր է, որ ծնողն այս պարագայում լինի հավասարակշռված, հասկանա խնդրի

բուն էությունը, դրանից բխող հետևանքներն ու հնարավոր վտանգները: Այս առումով անկյունաքարային է ուսուցչի մոտեցումը:

Բացառապես քաղաքավարի, մանկավարժական էթիկայի կանոնների պահպանմանմամբ պետք է տեղի ունենա ուսուցիչ-ծնողական համայնք շփումն ու համագործակցությունը: Լարվածությունը, կոնֆլիկտների անկառավարելիությունը, անշուշտ, այս գործընթացում տեղ չունեն: Կողմերը երկուստեք պետք է գիտակցեն, որ քննարկումն ու բացասական կողմերի մատնանշումն ուղղված է ոչ թե իրենց իրավունքների կամ արժանապատվության ոտնահարմանը, այլև հիմնախնդրի բարձրաձայնմանն ու հնարավոր լուծումներ գտնելուն: Ծնողական ժողովների ընթացքում կատարած արձանագրումների և խնդիրների բարձրաձայնման հատվածում կարող են ներկա գտնվել նաև այլ ուսուցիչներ, սոց. մանկավարժներ, հոգեբաններ: Այսպես քննարկումն ավելի արդյունավետ և կառուցողական բնույթ կարող է կրել:

Ծնողական համայնքի հետ իրականացվող հանդիպումների՝ ժողովների ժամանակ ուսուցչի դերը չի սահմանափակվում բացառապես խնդիրների վերհանմամբ: Շատ կարևոր է նաև սովորողների ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումը: Այս առումով ուսուցիչը կարող օգտագործել մի շարք գործիքներ, որպեսզի ծնողների համար ապահովի մի շարք նեղ մասնագիտական կարողունակություններ, որոնք բնորոշ են մանկավարժական աշխատողներին, սակայն շատ կարևոր են նաև ծնողների՝ որպես երեխայի դաստիարակման առաջնային օղակի համար: Կարելի է կիրառել ՏՀՏ գործիքներ, որպեսզի ասելիքն ավելի պարզ ու հասանելի դառնա:

Դասարանի ղեկավարի՝ ծնողների հետ տարվող աշխատանքի բաղադրիչ է՝

- աշակերտի ընտանիքի, նրա կենսաձևի և սոցիալական մշակույթի ուսումնասիրություն,
- երեխաների դաստիարակության մեջ դպրոցի ու ընտանիքի միասնական պահանջների սահմանումն ու պահպանումը,
- ծնողների հետ տարվող մանկավարժական-լուսավորչական աշխատանքը ծնողական համալսարանների և պրակտիկ մանկավարժական օգնության, նրանց մանկավարժական գիտելիքների հարստացման միջոցով,

- երեխայի զարգացման ընթացքի վերաբերյալ փոխադարձ տեղեկություն տալը,
- երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացների արդյունավետությանը նպաստող համատեղ որոշումների ընդունումը,
- աշակերտների ազատ ժամանակի արդյունավետ օգտագործման աշխատանքների մեջ ծնողների ներգրավումը,
- ծնողների հետ վստահելի և գործնական հարաբերությունների սահմանումը[5]:

Պատկերացնենք մի իրավիճակ, երբ դասարանում սովորում է ներառական կարիքներով աշակերտ, իսկ ծնողական համայնքում կա տարակարծություն. մի մասը բացասաբար է վերաբերվում այդ հանգամանքին: Ուսուցչի միայն խոսքը բավարար չի լինի ծնողների դժգոհ հատվածին հակառակ համոզմունքին բերելու, ուստի ուսուցիչը կարող է նախօրոք պատրաստել ճանաչողական տեսասահիկ, որի օգնությամբ ծնողները կծանոթանան ներառական համարվող անձանց հիմնական առանձնահատկություններին, օրենքով սահմանված նրանց իրավունքներին: Կարծում ենք այս եղանակով, առանց ավելորդ լարվածության, կարելի է գտնել ընդհանուր եզրեր խնդրո առարկայի շուրջ: Խնդրահարույց հարցերի քննարկման ժամանակ կարևոր է լսել բոլոր կողմերին, հենվել առավել կենսափորձ ունեցող ծնողների կենսփորձի, ծնողական կոմիտեի անդամների կարծիքների վրա: Դասղեկի վարքագծի կանոնները ծնողական ժողովի ընթացքում խիստ կարևոր են: Խոսքի, ինտոնացիայի, ժեստերի և այլ միջոցների օգնությամբ հարկավոր է ծնողներին հաղորդել հարգանք, փորձել հասկանալ ու ճիշտ որոշել այն խնդիրները, որոնք առավել անհանգստացնում են նրանց: Խոսել ծնողների հետ հարկավոր է հանգիստ և բարեհամբույր: Կարևոր է, որ բոլոր սովորողների ծնողները ժողովից գնան հավատով լցված դեպի իրենց երեխան:

Ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել ուսուցչի և դպրոցի մյուս մանկավարժական աշխատողների աջակցության և օգնության վրա: Կարող ենք վստահաբար ասել, որ ուսուցիչի մոտեցումներից շատ բան է կախված: Ուսուցիչը

[5] Լ. Ասատրյան, Մ. Ասատրյան, Ն. Սաֆարյան, «Դպրոցի կառավարման հիմունքները», ուսումնամեթոդական ձեռնարկ Երևան, 2018:

սովորողների, նրանց ծնողներին հետ ճիշտ համագործակցության արդյունքում կարող է նրանց մեջ ձևավորել բարձր արժեքներ, ընտանեկան ջերմ մթնոլորտ:

Կարևոր հանգամանք է նաև երեխայի կարգավիճակը ընտանիքում: Այս հարցը նույնպես պետք է դնել ընտանիք-դպրոց համագործակցության ակունքում: Այս մասով իր կարևոր գործառույթների փաթեթն ունի ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժը: Սոցիալական մանկավարժը, համագործակցելով բազմամասնագիտական խմբի մյուս մասնգետների հետ, ուսումնասիրում է սովորողների կյանքի պայմանները, ընտանիքի առանձնահատկությունները, ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցությունը սովորողի վրա, նրանց սոցիալական միջավայրը, շփումները, հետաքրքրությունները, հաղորդակցման դժվարությունները, սոցիալական միջավայրում հարմարման և պաշտպանվածության մակարդակը, դուրս է բերում կարիքները և դրանց համապատասխան կազմում է միջամտության պլան, որը ներառում է կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումները, ժամկետները, պատասխանատուները[6]:

Հաճախ խնդիրը ոչ թե դպրոցի կամ այլ սովորողների հետ հարաբերությունների մեջ է նկատվում, այլ ծնող-երեխա փոխհարաբերություններում: Այստեղ ևս դպրոցն ունի իր անելիքը: Ծնող-երեխա կոնֆլիկտային իրավիճակների դեպքում ուսուցիչն ու հեգեբանը աշխատանք են տանելու ծնողների հետ, և այդ աշխատանքի գլխավոր նպատակը ծնողների կողմից երեխայի պրոբլեմի, նրա անհատականության օբյեկտիվ ընկալումն է, երեխայի հետ հաղորդակցման ընթացքում իր դաստիարակչական մարտավարության, ինչպես նաև կրթական գործընթացի այլ մասնակիցների հետ համագործակցության որոշումն է: Ընտանիքին ցուցաբերվող աջակցության մեջ կարևոր է ծնողների և մանկավարժների գործողությունների համաձայնեցվածությունը: Ցանկալի է, որ դժվար երեխան իր ժամանակի յուրաքանչյուր պահին գտնվի որևէ կողմի պատասխանատվության գոտում: Այս ջանքերը անհրաժեշտ են, քանի որ նույնիսկ մեկ «պրոբլեմային» երեխան կարող է էական ազդեցություն թողնել դպրոցի այլ երեխաների վրա[7]:

---

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ կառավարության որոշում:

[7] http://gspi.am/media/journal/2014n1b/20.pdf Ա. Մ. Ձադոյան, «Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում», ՇՊՀ, գիտական հոդված, 2014, էջ 190:

Այսպիսով, եկանք այն համոզմունքին, որ ուսուցիչներն ու ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը սովորողին տալիս է գիտական գիտելիքներ, դաստիարակում է, զարգացնում է մի շարք կարողունակություններ: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու, հարգելու, գնահատելու կարողությունները: Անձի ներդաշնակ զարգացման համար այս բոլոր որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

Հաճախ ծնողական ժողովների ժամանակ շատ խնդիրեր չեն բարձրաձայնվում, դրանք կարող են լինել բազմաբնույթ և վերաբերվեն կոնկրետ սովորողի կամ մի քանի սովորողներին: Նմանօրինակ դեպքերում, հաշվի առնելով մանկավարժական էթիկան, ուսուցիչը շրջանցում է հիմնախնդիրը՝ ընտրելով ծնողի հետ հաղորդակցվելու ու բանակցելու այլ եղանակներ: Կարելի է անհատակն որևէ ծնողի հրավիրել դպրոց ու մտերմիկ զրույց վարել իր երեխայի բացասական վարքի կամ արարքի մասին: Այս եղանակն ավելի նպատակահարմար է ծնողի համար, քանի որ մյուս ծնողների ներկայությամբ տեղին չէ բարձրաձայնել սովորողի վատ կամ ծայրահեղ վատ արարքը:

Մանկավարժական համակողմանի խորհրդատվությունները հիմնականում կրում են անհատական բնույթ: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է ծայրահեղ, ու պահանջվում է արտակարգ օգնություն: Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքն ապահովելն է, այլև ծնողներին հուզական աջակցություն ցույց տալը: Ամփոփելով վերոհիշյալը, նշենք, որ մանկավարժական խորհրդատվությունը կարող է ապահովել դպրոցում մանկավարժական հանրույթի միասնական աշխատանքի իրականացումը, դպրոց-ընտանիք համագործակցության ձևավորումը և երեխայի անհատական զարգացման համար օպտիմալ պայմանների ստեղծումը: Կրթական բարեփոխումների արդի փուլում մանկավարժական խորհրդատվությունը՝ որպես նորարարություն, կարող է դրական տեղաշարժեր առաջացնել ոչ միայն առանձին վերցրած մանկավարժների մասնագիտական գործունեության, աշակերտների վարքի ձևավորման, շտկողական մանկավարժության մեջ, այլև ավելի ընդհանուր ձևով կարող է նպաստել կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Տեխնոլոգիաները մեծ հնարավորություններ են տալիս ծնողներին արագորեն տեղեկատվություն ստանալ: Այս եղանակով նույնպես կարելի է բանակցել ծնողի հետ, խոսել խնդրի մասին ու միասին լուծումներ փնտրել: Որևէ պարագայում թույլատրելի չէ իրավիճակի լարումն ու սրացումը: Ամեն բան պետք է կանոնակարգվի օրենքով ու մարդկային բարձր արժեքներին համապատասխան: Ճիշտ ու կառուցողական ծնողական ժողովները, ծնողի, ընտանիքի հետ կատարած անհատական աշխատանքը թույլ կտա կառուցել բացառապես բարիդրացիական ու բարեկամական մթնելորտ, որտեղ ամեն կողմ ունի իր գործառույթները, պարտականություններն ու սպասումները:

Սովորողի կայացման, արժեհամակարգի ձևավորման համար մեծագույն վտանգ է ներկայացնում ծնողական անտարբերությունը: Այս տեսակետից ևս իր կարևորագույն դերակատարումն ունի մանկավարժական խորհրդատվությունը: Վերը նշած պարագայում շատ կարևոր է ուսումնական հաստատության հոգեբանի աշխատանքը: Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը հոգեբանական խորհրդատվությամբ աջակցում է ծնողներին (կամ նրանց օրինական ներկայացուցիչներին), մանկավարժներին և կրթական գործընթացի այլ մասնակիցներին սովորողների զարգացման, ուսուցման և դաստիարակության հարցերում, ինչպես նաև տալիս է անհրաժեշտ տեղեկատվություն երեխայի զարգացման համար լիարժեք պայմանների (այդ թվում՝ առանձնահատուկ) ստեղծման վերաբերյալ[8]: Մշտադիտարկման արդյունքում խնդիրներ նկատելու պարագայում ուսուցիչը, սոց. մանկավարժը կարող են տնայց իրականացնել՝ պարզելու սովորողի խնդիրները:

Այսպիսով, կարող ենք վերահաստատել այն պնդումը, որ ուսուցչի համագործակցումը սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողի կրթության կազմակերպան ու դաստիարակության մեջ ունի առանցքային նշանակություն, քանի որ լավ ու գիտակից սերունդ ունենալը թե' դպրոցի, թե' ընտանիքի համատեղ ջանքերի արգասիքն է:

[8] https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ կառավարության որոշում:

1.3 Փորձարարական մաս

Աշխատանքի փորձարարական հատվածը նպատակ ունի ծնողների շրջանում նախօրոք իրականացված հարցումների արդյունքներով վերահաստատել աշխատանքի տեսական մասում կատարած մեր պնդումները: Հերթական ծնողական ժողովից հետո ժողովին մասնակցող 22 ծնողները լրացրեցին հարցաթերթեր հետևյալ բովանդակությամբ՝

1/Ինչ հարաբերություններ ունեք Ձեր երեխաների հետ:

2/Ինչ հարաբերություններ ունեք Ձեր երեխային դասավանդող ուսուցիչների հետ:

3/Ինչ հարաբերություններ ունեք Ձեր երեխայի դասարանի ղեկավարի հետ:

4/Ինչ հարաբերություններ ունեք Ձեր երեխայի դասարանում սովորող երեխաների ծնողների հետ:

5/Նկարագրեք Ձեր վերաբերմունքը դպրոցի հանդեպ:

6/ Ինչպիսի ծնող եք համարում Ձեզ/ընտրեք տարբերակներից/:

- **Ժողվրդավար**
- **Խիստ**
- **Մեղմ ու հանդուրժող**
- **Ծայրահեղ խիստ ու պահանջկոտ**
- **Երբեմն անտարբեր**

7/ Որքան հաճախ եք ստուգում Ձեր երեխայի օրագիրը, տետրերը, վերահսկում դասերը պատրաստելու գործընթացը:

8/ Որքան հաճախ եք այցելում դպրոց:

9/ Մասնակցում եք ծնողական ժողովերին:

10/ Ինչպես եք վերաբերվում դպրոց-ընտանիք կապին:

Եթե ընդհանրացնենք հարցված ծնողների պատասխանները, ապա կունենանք հետևյալ պատկերը: Հարցման մասնակիցների գրեթե մեծ մասը, անկախ զբաղվածությունից, հետևողական է իր երեխայի կրթությանը, ամեն օր հետևում է դասապատրաստմանը, ստուգում օրագիրը: 3 ծնող աշխատանքի պատճառով երբեմն չի հասցնում հետևել երեխայի կրթությանը, հաճա- չի այցելում դպրոց, բայց ուսուցիչների հետ առցանց կապ է պահում: Ծնողները կարևոր են համարում իրենց

միջև առողջ համագործակցությունը՝ ի շահ իրենց երեխաների կրթության: Կարևոր հանգամանք է նաև, որ ծնողները միաբերան կարևոր են համարում դպրոց-ընտանիք շարունակական կապը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ հետևողական աշխատանքը ծնողների և ուսուցիչների միջև կարող է էապես առաջ մղել սովորողին դեպի ուսում, դեպի նոր բարձունքներ, ուստի այս կապը պետք է լինի շարունակական, ձեռք բերի ավելի նոր ու կառուցողական համագործակցության ձևեր:



«Երեխաներիդ մի դաստիարակիր, միևնույն է, նրանք քեզ նման են լինելու. Դաստիարակիր ինքդ քեզ

Կցանկանայինք ավելացնել, որ ծնողական ժողովից առաջ ծնողները, տնօրենության թույլտվությամբ, մասնակցեցին «մայրենի» առարկայից բաց դասին՝ հնարավորություն ունենալով հենց դասապրոցեսի ժամանակ տեսնել իրենց երեխանի մասնակցությունը դասին: Ստորև ներկայացնում ենք դասի պլանը:

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկա՝ Մայրենի

Դասարան՝ 3-րդ

Թեման՝ Աթաբեկ Խնկոյանի «Խոզն ու ագռավը» առակը

Դասի տիպը՝ ամփոփման, գիտելիքների ամրապնդման դաս

Դասի նպատակներն ու խնդիրները՝

- Զարգացնել ընթերցելու, տեքստի՝ այս պարագայում առակի բովանդակության ստեղծագործական վերարտադրելու կարողությունները:
- Առակի բովանդակության շուրջ դատողություններ անելու ունակության զարգացում:
- Արժեքային համակարգի ձևավորում, բարեկիրթ վարքագծի կարևորության շեշտադրում:
- Կրկնել և ամրակայել առարկա, գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերի վերաբերյալ ունեցած գիտելիքները

Դասի ընթացքում կիրառվող մեթոդներ և հնարներ՝

- Մտքերի տարափ,
- Զրույց,
- Հարց ու պատասխան,
- Տ-աձև աղյուսակ:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Մտագրոհի մեթոդով կրկնել ժողովրդական բանահյուսության նմուշներից առակի վերաբերյալ գիտելիքների իմացությունը, հարցերի միջոցով ամփոփել առակի ժանրային առանձնահատկությունները, բերել այլ առակների օրինակներ:

- **Ի՞նչ է առակը:**
- **Ո՞վ է Աթաբեկ Խնկոյանը:**
- **Ուրիշ ի՞նչ առակագիրներ և առակներ գիտեք:**
- **Քա՞նի մասից է բաղկացած առակը:**
- **Ի՞նչ եք հասկանում առակի խրատական մաս ասելով:**

Սովորողները ներկայացնում են նախորդ դասերի ընթացքում առակների մասին իմացած տեղեկությունները: Հաջորդիվ ուսուցիչը հանձնարարում է դերերով ընթերցել առակը՝ ուշադրություն դարձնելով արտահայտչամիջոցների վրա: Ընթերցելուց հետո ուսուցչի հանձնարարությամբ դասարանը բաժանվում է խմբերի, որոնք պետք է բառարանից գտնեն անծանոթ բառերի բացատրությունները՝ ագահ, անհագ, զխկտվել, ագահ, զորանալ, ապերախտ, լոկ, կուզիկ: Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը՝ բառերի բացատրությունները գրելով գրատախտակին: Անդրադարձ է կատարվում թե՛ բառի իմաստին, թե՛ ուղղագրությանը, թե բառը վերլուծվում է խոսքիմաստային առումով:

Հաջորդիվ աշակերտները, իրար շարունակելով կկարդան առակը, որից հետո Տ-աձև (երկսյուն) աղյուսակում մեկ բառով կհատկանշավորեն խոզին ու ագռավին՝ զուգահեռ բանավոր կարծիք հայտնելով վերջիններիս արարքների մասին: Ուսուցիչը կհանձնարարի բաժանվել զույգերի, և աշակերտները կստանան կստանան քարտային առաջադրանքներ.

1/ Շարունակի՛ր միտքը՝ գրի՛ր ևս 2-3 նախադասություն:

- **Ի՞նչ կլինի, եթե ծառը չորանա, խոզը կարո՞ղ է կաղին ուտել**
- **Պատկերացրու, որ Երկիր մոլորակից վերենա բուսականությունը, ի՞նչ կլինի:**

2/ Գրի՛ր տրված բառերի հոմանիշները.

Զարթնել-

Վիզ-

Ազահ-

Գիրանալ-

3/ Առակից գտի՛ր համապատասխան բառերը և լրացրու աղյուսակը:

Գոյական	Ածական	Բայ

Դասի այս հատվածում ուսուցիչը աշակերտներին կտա անհատական հարցեր, որոնց միջոցով էլ կամփոփի դասը:

- **Ո՞րն էր խոզի սխալ վարքագիծը:**
- **Ինչո՞ւ ես այդպես կարծում:**
- **Ի՞նչ վատ սովորություն ուներ խոզը:**
- **Ինչու՞ է հարկավոր խնամքով վերաբերվել բնությանը:**
- **Խոզին ի՞նչ բառով կհատկանշավորես:**

Դասի ավարտին ուսուցիչը մտագրոհի միջոցով կլսի աշակերտների խորհուրդները խոզին: Կարծիքները աշակերտները կգրեն գրատախտակին:

Գնահատում /փոխադարձ գնահատում/

Տնային հանձնարարություն

Ամփոփելով դասի վերը նշված օրինակը կարող ենք բերել հետևյալ եզրահանգումները՝

- Դասը խթանեց սովորողների ինքնուրույն խոսքի զարգացմանը:
- Սորորողների մոտ ձևավոևվեց լավն ու վատը տարբերակելու կարողություն:
- Աշակերտները վերհիշեցին բառերի խոսքիմաստային նշանակությունը:
- Խմբում աշխատելու հմտությունները զարգացան:
- Կարծիք, դիքորոշում հայտնելով՝ ընդգծվեց սովորողների ինքնուրույնությունը:
- Անդրադարձ կատարվեց բնապահպանական կարևոր հիմնախնդիրներին՝ կարևորելով բնության պահպանությունը /միջառարկայական կապ/:

- Սովորողները աշխատեցին բառարանով՝ վերհիշելով բառարաններից օգտվելու կարգը:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ առակի ուսուցումը տարրական դասարաններում բավականին արդյունավետ է, երբ զուգորդվում է ակտիվ մեթոդական հնարներով: Իհարկե, ավանդական եղանակով նույնպես կարելի է վարել դասը, այնուամենայնիվ, հաշվի առնելով ժամանակակից աշակերտների պահանջմունքները, կարծում ենք, որ ավելի շատ պետք է լսելի լինի հենց նրանց խոսքը, իրենք պետք է բացահայտեն այս կամ այն հմտությունը, կարողությունն ու գիտելիքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, հիմք ընդունելով հետազոտության ընթացքում կատարած մեր պնդումները՝ կատարենք մի քանի արձանագրումներ.

- Ուսուցիչն առանցքային դերակատարում ունի սովորողների կրթության ու դաստիարակության գործընթացում սովորողի ծնողին կամ օրինական ներկայացուցչին ներգրավելու առումով:
- Ուսուցիչն ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար պետք է համագործակցային հարաբերություններ ստեղծի սովորողների, վերջինիս ծնողի կամ օրինական ներկայացուցիչների, այլ մանկավարժական աշխատողների հետ:
- Ուսուցիչը՝ որպես ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչ և պատասխանատու, զարգացնում է սովորողների ակտիվությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը՝ սորտորեն համագործակցելով սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների հետ:
- Ուսուցիչը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայցուցիչը սովորողների կրթության ու դաստիարակության հարցում պետք է ունենան միասնական պահանջներ ուն նպատակներ:
- Ուսուցիչը սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների համար պետք է ապահովի մանկավարժական-լուսավորչական խորհրդատվություն՝ նպատակ ունենալով զարգացնել նրանց մանկավարժական գիտելիքները:

- Ուսուցիչը պարտավոր է սովորողի զարգացման ընթացքի վերաբերյալ տեղեկություն տալ սովորողի ծնողին կամ օրինական ներկայացուցիչներին՝ ակնկալելով նրանցից հետադարձ կապ:
- Ուսուցիչն ու սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը պետք է սովորողի ուսուցման և դաստիարակության գործընթացների վերաբերյալ որոշումներ ընդունեն համատեղ:
- Ուսուցիչը պետք է սահմանված կարգով իրականացնի ծնողական ժողովներ՝ նպատակ ունենալով քննարկել առկա խնդիրներն ու դրանց լուծում տալ համատեղ աշխատանքի արդյունքում:
- Դպրոց-ընտանիք համագործաքցության առանցքում պետք է դրվեն բացառապես սովորողի շահերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. www.arlis.am/documentview.aspx?docID=74345
   ՀՀ Հանրակրթության մասին օրենք:
2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808
   ՀՀ կառավարության որոշում:
3. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf
   Ծնողների ներգրավվածությունը, Թբիլիսի, 2015:
4. http://gspi.am/media/journal/2014n1b/20.pdf
   Ա. Մ. Զաղոյան, «Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում», ՇՊՀ, գիտական հոդված, Երևան 2014:
5. Լ. Ասատրյան, Մ. Ասատրյան, Ն. Սաֆարյան, «Դպրոցի կառավարման հիմունքները», ուսումնամեթոդական ձեռնարկ Երևան, 2018: